

# ՅՈՒՆԵՍԿՈ Ի ՈՒ ՀԱՅ ՎԱՋԱՌԱԿԱՆՆԵՐԸ

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԱԶԳ. ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ

Հայ տառերու գիւտին 1500ամեակի և տպագրութեան 400ամեակի յորելեանին առթիւ Ազգ. կեդր. վարչութեան խառն ժողովոյ որոշմամբ՝ յառաջիկայ շաբաթ օր, 12 հոկտ., փակ պիտի մնան Ազգ. Պատրիարքարանը և բոլոր հայ վարժարանները։

Հետեւաբար, այս տնօրէնութիւնը կը ծանուցուի ի գիտութիւն բարեպաշտ մերազնէից, որպէսզի նոյն տօնական օրը սուրբ պահեն։

(Կնիք)

### «ԺԱՄԱՆԱԿ»

Կը լսենք թէ Հայկական Պանքայի օրինակին հետեւելով հայ վաճառականներուն մէկ մասը ինքնաբերաբար արդէն որոշած են շաբաթ օրը փակել իրենց վաճառատունը և դրօշազարդութիւն կատարել։ Պատրիարքարանի վերոգրեալ շրջաբերականը անուղղակի թելադրութիւն մըն է որ բոլոր հայ վաճառականներն ու խանութպանները, կամ մէկ բառով ամբողջ Հայութիւնը վաղուան օրը սուրբ պահեն։ Այս շրջաբերականին

վրայ այլեւս աւելորդ կը զգանք մեր կողմէն ուէ թելադրութիւն ընելու որպէսզի հրապարակին վրայի հայ վաճառատուններն ու խանութպանները փակ մնան, ինչ որ փայլ մը աւելի տուած պիտի ըլլայ օրուան հանդիսաւորութեանց և անգամ մը ևս պիտի կրկնապատկէ տօնին նշանակութիւնը, Յորելեանին մեծութիւնը։

Երբ խօսքը հայ վաճառականութեան վրայ է, աւելորդ չըլլայ թերեւս տեղեկացնել թէ անոնց միջեւ մեծ մրցում մը սկսած է, իրենց տալիք գումարին քանակութեամբը, գրտնուելու համար նուիրահաւաքութեան ցանկին գլուխը, այսինքն ուրիշներու տուածէն աւելին տալով առաջնութիւնը գրաւելու համար։ Մեր լսածին համաձայն — եթէ կը ներուի այս անգագտնապահութիւնը — իրրանոսեան եղբայրները մտադրած են 250 ոսկի նուիրել, Եղուարդ Էֆ. Գարակէօզեանը 150 և ուրիշ վաճառականներ ու յանձնակատարներ իրենց պիւտճէին համաձայն նուէրներ սահմանած են։